ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՐԱԿԵՐՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 05-Ն

15.03.2012թ
N 03 ՆԻՍՏԻ

## ԴԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 26-րդ կետով և ՀՀ « Իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Դարակերտ համայնքի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Դարակերտի գյուղական համայնքի ղեկավարին Դ.Սիմոնյանին, գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկությամբ սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
3. Ուժը կորցրած ճանաչել Դարակերտ գյուղական համայնքի ավագանու 2011թ.-ի դեկտեմբերի 5-ի N7 նիստի 16-Ն որոշումը:
4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում Դարակերտ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Ձ. Մելքոնյան
Գ. Միրզոյան
Ա. Վարդանյան

Գ.Կարապետյան
Գ. Ավետյան
Գ. Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված N 01
ՀՀ Արարատի մարզի Դարակերտ
համայնքի ավագանու 2012 թվականի
դեկտեմբերի 15-ի N 03 նիստի 5 - Ն
որոշման

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 13
2. աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային Դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 140 000 դրամ |
| Հայեցողական | պաշտոններ | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 85 000 |
| Համայնքային | ծառայության | պաշտոններ |
| Աշխատակազմի քարտուղար /1,2-1/ | 1 | 90 000 |
| Աշխատ. առաջատ. մասնագետ /3.1-1/ | 1 | 77 000 |
| Աշխատ. առաջատար մասնագ /3,1-2/ | 1 | 77 000 |
| Աշխատ. առաջատար մասնագ /3,1-3/ | 1 | 77 000 |
| Աշխատ.առաջին կարգի մասն ./3,2-1/ | 1 | 70 000 |
| Աշխատ.երկրորդ կարգի մասն /3,3-1/ | 1 | 65 000 |
| Տեխսպասարկման | անձնակազմ | |
| Պահակ | 1 | 32 500 |
| Հավաքարար | 1 | 32 500 |
| Գերեզմանցի պահակ | 1 | 32 500 |
| Տարբեր գործառույթներ | իրականացնող | աշխատակիցներ |
| Սպորտ մեթոդիստ | 1 | 32 500 |
| Աղբ տեղափոխող մեխանիզատոր | 1 | 70 000 |

ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ.ՍԻՄՈՆՅԱՆ

15 մարտի 2012թ
Գ..Դարակերտ